



ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

ԱՐՀԻ. ԳԵՐՊ.

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՆՈՍԵՆՍԻ

Արհիպատիկ Գրիգոր Եպս. Պահապան-եան, նախկին վիճակաւոր Գաղատիոյ Հայ կաթողիկէ Համայնքին, իր ալեղարդ հասակին մէջ կը վախճանի Փարիզ, 3 Յունուար 1951ին:

Հայ Կաթ. Նուիրապետութեան կը պակսի սրբակեաց եւ պատկառելի եպիսկոպոս մը: Մխիթարեան Միաբանութիւնը կը մասնակցի Հայ Նուիրապետութեան ընդհանուր սուղին, եւ կ'աղօթէ Աստուծոյ շնորհելու յաւիտեանական հանգիստ իր անբասիր եւ առաքելաջան Պաշտօնեային, որ իր անձին մէջ կը միացնէր նկարագրի աղնութիւնը, աստուածասէր ու եռանդուն առաքելական ուղին, եւ անկեղծ ազդասիրութիւնը:

Յուզարկաւորութիւնը տեղի կ'ունենայ 8 Յունուարին: Թաղման կարգը կը կատարէ Բարիդի Սէն Սիւրբիսի եկեղեցւոյն մէջ, Արհի. Մեսրոպ Արքեպս. Հապովեան, Ընդհ. Աբբայ Վիեննայի Մխիթարեանց: Ներկայ են սգաւոր արարողութեան Բարիդի Արքեպիսկոպոսը Արհի. Գերայ. Ֆելդէն, Առաքելական Դեսպան՝ Արհի. Ռոնքալի արքեպիսկոպոսը, եւ Գերայ. Լաթիէ, եկեղեցական ու քաղաքական անձնաւորութիւններ եւ Սեւրի Մխիթարեան Վարժարանին Տեսչութիւնը:

Ծնած Գաղատիա, 5 Դեկտեմբ. 1866ին, յետ իր մանկութիւնը անցընելու իր ծնընդավայրին փոքրիկ կղերանոցին մէջ, նը-

ւիրելով ինքզինքը Աստուծոյ ծառայութեան, բարձրագոյն ուսումներու համար կ'անցնի Փարիզ, Սէն Սիւրբիսի Կրօնական Վարժարանը, ուր կը մնայ մինչեւ 1889 թուականը: Այդ տարին արդէն սարկաւադ, կ'անցնի Պոլիս եւ կը ձեռնադրուի քահանայ Գերայ. Յովհաննէս Արքեպս. Յովհաննէսեանէ 1890ին: Կը պաշտօնավարէ Գաղատիա, Լիւիզիոյ եւ Կուտինա, միշտ երկիւղած, խոնարհ, նուիրուած իր առաքելութեան: Իրը պարտաճանաչ ու եռանդուն քահանայ՝ փութով կը դառնայ առարկայ ուշադրութեան:

1911ին Հոռմի մէջ տեղի կ'ունենար Հայ Կաթ. Նուիրապետութեան Ազգային Սիւնհոգոսը, 15 Հոկտեմբերէն մինչեւ 8 Դեկտեմբեր: Նուիրապետական Կարգը զօրացնող ուրիշ ընտրեալներու հետ ինքն ալ կը ձեռնադրուի Եպիսկոպոս՝ Պօղոս-Պետրոս Ժ.Գ. Թերզեան Կաթողիկոս-Պատրիարքէն, իրեւ Վիճակաւոր Գաղատիոյ, Կղեմէս Եպս. Ղազարոսեանին տեղը, որ նախընթաց տարին վախճանած էր:

Մինչեւ 1915ի աղետի օրերը, Գրիգոր Պահապանեանի կեանքը կ'անցնի խաղաղ: Զարդի ահաւոր կազմակերպութիւնը կը ցնցէ զինքը եւ իր թեմին քահանաներն ու ժողովուրդը: Իրեւ քաջ հոյժաւոր երբեք չի լքեր իր ժողովուրդը, ու կ'ըլլայ ընկերը անոնց ցաւին ու տառապանքին: Շղթայուած կը բարձրանայ իր Գողգոթան, եւ իր հետ հաղարաւորներ, զիմադրելով թուրքի սպանալիքներուն: Ու անցնելով Կեսարիայէն կը քշուի իր խումբին հետ ամայի վայրեր՝ սովով ու ահաւոր չարանքներով զտնելու մահը մարտիրոսներու: Զի դադրի անվերջ սրտապընդելէ իր ժողովուրդը, եւ պատրաստելու դանոնք մահուան: Սակայն սուրհանդակ մը — ձեպընթաց ձիաւոր՝ որ Պոլսէն կը հասնի — կ'ազատէ զանոնք անողորմ մահէն: Թերզեան Կաթողիկոսն ու Նուիրապետութեան Արհի. Եպիսկոպոսները յա-

ջողած էին Գերմանական Դեսպանին միջնորդութեամբ ստանալ նահատակներուն համար թաղաւորական շնորհագիրը:

Ատեն մը իրրեւ պատրիարքական Տեղապահ մնալէ վերջ Պոլսա, 1921էն վերջ կը փոխադրուի Փարիզ, եւ հոս իր կեանքը կը վերստանայ իր խաղաղ ընթացքը, նըւիրուած դարձեալ կաթողիկէ բաղմաթիւ ընտանիքներու հոգեւոր առաջնորդութեան, սիրուած ամէնքէն եւ ազգային շրջանակներէն:

Փարիզահայ կաթողիկէ, կաթողիկէ կամ ոչ, անոր պատկառելի անձնաւորութեան զիմաց կը խոնարհէր, իրրեւ անբասիր եկեղեցականի մը, որ իր բոլոր սրտով ու հոգով կը ցանկար բարիքը ժողովուրդին: Հայրական հոգածութիւն, սրտեռանդն նըւիրում, սիրտարար խօսք անխտիր ամէնուն կ'ըլլան իր գործունէութեան ցայտուն կողմերը: Յարգուած ու սիրուած նաեւ Փրանսական կղերէն, Արհի. Գրիգոր Եպս. Պահապանեան զարդն էր հայկական արարողութիւններու, հայկական ձայնաւոր Պատարագներու՝ որ շատ անգամներ տեղի կ'ունենային Նոթր-Ծամի մէջ մեծավայելու հանդիսաւորութեամբ: Փարիզի մէջ հայ կաթողիկէ եւ Կաթողիկէ Համայնքը տօնեց խանդավառ ողբերգութեամբ 1936 թուին անոր Եպիսկոպոսական Օծման 25-ամեակը, եւ 1940ին, եւ 1950ին քահանայական ձեռնադրութեան յիսնամեայ եւ վաթսուսամեայ յորեկանները:

Ու հիմա որ ան մեկնած է անդարձ, պարապ մ'է որ կը թողու ետին: Կը մաղթենք որ իրեն պէս առաքելահոգի եպիսկոպոսներ չպակսին մեր Նուիրապետութեան մէջ, օրինակ եւ քաջալեր սրբազան աւանդութիւններու եւ ի բարձրութիւն հաւատացեալ ժողովուրդին:

ԽՄԲ.



Ազգային Մամուլը աննախընթաց յաջողութիւն հռչակեց 1950-ի Գեղունին: Իրրեւ ծաւալ եւ բովանդակութիւն, սիրուեցաւ ան առ հասարակ ո'չ միայն ազգային Մամուլի ներկայացուցիչներէն, որոնք երկար փնտրեցին հայ հասարակ կ'ընդհանրեցին, այլ նաեւ անհատներէն, որոնք շնորհակալութեան զիրեր հասցուցին խմբագրութեանս, իրենց օրինակ մը ապահովեցուցած ըլլալու համար, սիրալոյսով վճարելով զինը:

Գաղափար մը տալու համար ստեղծուած խանդավառութեան, կը հրատարակենք հոս զանազան կողմերէ մեզի հասած նամակներէն միայն քանի մը հատը, պարզապէս իրրեւ վկայութիւն ընդհանուր ողբերգութեան, որով ողջունուեցաւ այս զեղատիպ հրատարակութիւնը:

Ազգային Մամուլի արտայայտութեանց արտատպումը շատ երկար ըլլալուն, կը վերապահենք ուրիշ յարմար առիթի:

*

Շնորհակալութեամբ ստացայ հոյակապ «Գեղունի»-ն, զայն կը պահեմ խանութիս մէջ, ծանօթներու կը ցուցնեմ, որոնք զարմանալով կը զարմանան ու նմանը չեն գտներ իրենց քով: Կեցցե՛ն մեր սիրելի Մխիթարեան ժրջան պատուական Հայրերը: Անձամբ Զեր մօտ դալուս, հաւանարար շուտով, կը ստանաք փոխարժէքը:

Տոփո. Ռափայէլ ձանկեան

14-1 1951, (Գործինա ՏՄԻՖէցցոյ)

*

Այսօր ստացայ «Գեղունի»-ն որ իսկապէս գեղ ունի: Շատ շնորհակալութիւն ինծի